

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ՈՒ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ**

Բանալի բառեր-Հայաստանի Հանրապետություն, Սփյուռք, գաղթականություն, գաղութներ, ազգային խորհուրդներ, հյուպատոսարաններ, Բաթում, Թիֆլիս, Ռուսաստան:

Հայաստանի առաջին Հանրապետությունը ստեղծվեց քաղաքական և սոցիալ-տնտեսական անչափ դժվարին պայմաններում: Այդ ժամանակ (1918-1920 թթ.) Հայոց ցեղասպանությունից փրկված հարյուր հազարավոր հայեր ցրվել էին աշխարհով մեկ՝ առանց կենսական նվազագույն հնարավորությունների: Ուստի, չնայած դժվարություններին, ՀՀ իշխանությունները իրենց առաջնային գործերից էին համարում աշխարհասփյուռ հայությանն աջակցություն ցուցաբերելը՝ հընթացս մշակելով ու գործադրելով գաղութների հետ հարաբերությունների մեխանիզմներ:

Պետք է նշել նաև, որ գրականության մեջ Սփյուռքի ձևավորումը կապվում է Հայոց ցեղասպանության հետևանքների հետ և ընդգրկում է մոտ մեկուկես տասնամյակ, այդ թվում նաև ՀՀ գոյության տարիները<sup>1</sup>:

**1. Գաղութների ու գաղթականների հետ աշխատանքների կազմակերպումը Հայաստանի առաջին Հանրապետությունում:** ՀՀ-ում գաղութների ու գաղթականների հետ աշխատանքների կազմակերպման մասին խոսելիս հարկ է անդրադառնալ համապատասխան Ազգային խորհուրդներին, Փախստականների խորհրդին և ՀՀ մինիստրություն-նախարարություններին (ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Ներքին գործերի նախարարություն, Պարենավորման նախարարություն, Խնամատարության նախարարություն և այլն): Դրանք զգալի դերակատարություն են ունեցել գաղութների և գաղթականության կյանքի կազմակերպման, հայության համախմբման, հայրենիքի հետ կապի ապահովման ու ամրապնդման, գաղութների կյանքում առաջացած խնդիրների վեր հանման և հայության ներգաղթի կազմակերպման հարցում:

Ազգային խորհուրդներն իրենց առանձնահատուկ տեղն ունեն հայրենիքի հետ արտերկրի հայության հարաբերությունների բարելավման և զարգացման գործում: ՀՀ կառավարությունը առաջին հերթին աջակցում էր այն Ազգային խորհուրդներին, որոնք գտնվում էին հայ ստվար բնակչություն ունեցող քաղաքներում:

<sup>1</sup> Տե՛ս Հ. Մելիքտեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., 1985, էջ 4:

Տեղի հայության խնդիրների կարգավորումը և ՀՀ-ի հետ բնականոն կապի ապահովումը Ազգային խորհուրդների գործառնություններից թերևս ամենազլխավորն էին համարվում:

Հատկապես կարելի է առանձնացնել Թբիլիսիում, Բաքվում, ինչպես նաև Ռուսաստանի հայաշատ քաղաքներում գործող ազգային խորհուրդները: Ղատելով պահպանված փաստաթղթերից՝ ՀՀ-ն գումարներ է տրամադրել այդ խորհուրդներին՝ նրանց առջև դրված խնդիրները լուծելու համար<sup>1</sup>:

Փաստորեն, ՀՀ-ի կառավարության առջև ծառայած խնդիրներից էր հայրենի երկրից դուրս գտնվող հայության հետ բնականոն կապեր պահպանելը, ուստի Ազգային խորհուրդները կարևոր մեխանիզմ էին նորանկախ հանրապետության և տարագիր հայությանը օգնելու համար:

Գոյություն ուներ նաև Փախստականների խորհուրդ: Վերջինս զբաղվում էր հայ գաղթականների խնդիրների ուսումնասիրմամբ, տեղեկություններ էր հավաքում նրանց թվի, կարիքների մասին, հիմքեր մշակում խնդիրների լուծման համար: Օրինակ, կառավարության 1918 թ. օգոստոսի 28-ի որոշումներում տեսնում ենք, որ Փախստականների խորհուրդը 10 մլն. ռուբլի է տրամադրել Վրաստանում գտնվող փախստականներին<sup>2</sup>:

Մեծ նշանակություն ունեին նաև ՀՀ նախարարությունները, որոնցից յուրաքանչյուրը որոշակի դերակատարում ունեցավ հայրենիքի հետ գաղութների ու գաղթականության կապերի զարգացման գործում<sup>3</sup>: Գաղութների ու գաղթականության խնդիրների կարգավորմամբ և ուղևորության մասին էր զբաղվում ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը<sup>4</sup>: Նշված խնդիրների կարգավորման հարցում իրենց ուրույն տեղն ու դերն ունեին ՀՀ հյուպատոսարանները: Հյուպատոսարանների միջոցով ՀՀ իշխանությունները ոչ միայն հավաքում էին տվյալ երկրի հայության մասին արժանահարույց տեղեկություններ, այլև տվյալ երկրի հետ բնականոն հարաբերությունների հաստատման արդյունքում կարող էին կազմակերպել հայության ներգաղթը: Հյուպատոսարաններ էին հիմնվել Թավրիզում, Թիֆլիսում, Բաթումում, Սուխումում, Բաքվում, Ռուսաստանի հայաշատ քաղաքներում և այլուր<sup>5</sup>:

ՀՀ կառավարության 1919 թ. հունիսի 4-ի նիստում Արտաքին գործերի նախարարը տեղեկացնում էր, որ գաղութներում խիստ ոգևորված են ՀՀ

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., խմբագիր Ամատունի Վիրաբյանը, Ե., 2014, էջ 142; Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., խմբագիր Ամատունի Վիրաբյանը, Ե., 2010, էջ 68; Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ. (փաստաթղթերի ժողովածու), Ե., 2003, էջ 203, 256 և այլն:

<sup>2</sup> Նույն տեղում, Ամատունի Վիրաբյան, էջ 19:

<sup>3</sup> Տե՛ս Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 112-124:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 118-121:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 120:

անկախությամբ, իսկ տարբեր երկրներում ստեղծվում են հյուպատոսարաններ՝ գաղութների հայությանը ՀՀ-ի շուրջը համախմբելու համար<sup>1</sup> :

Կարևոր դեր է ունեցել նաև ՀՀ ԱԳՆ Տեղեկատու բաժինը, որն արձանագրում էր տարբեր տեղերից ստացված տեղեկությունները և դրա հիման վրա կազմում տեղեկագրեր<sup>2</sup>:

Կատարվող աշխատանքների որակը բարձրացնելու նպատակով ՀՀ կառավարության 1920 թ. օգոստոսի 27-ի որոշմամբ Արտաքին գործերի նախարարության կազմում հիմնվում է Գաղութային բաժինը. «Հայ գաղութների վիճակը ուսումնասիրելու, նրանց մայր երկրի հետ կապելու և նրանց նյութական ու բարոյական ուժերը Հայաստանի օգտին օգտագործելու նպատակով... Արտաքին գործոց նախարարության մեջ բանալ գաղութային բաժին»<sup>3</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, որոշ նախարարություններ իրենց գործառնություններն ունեին գաղութային խնդիրների լուծման գործում: Օրինակ, ՀՀ Ներքին գործերի նախարարությունն ուներ Ներգաղթի բաժին և Վերաշինության բաժին, որոնք առնչվում էին ներգաղթյալների հետ: ՀՀ կառավարության 1919 թ. հունիսի 29-ի նիստում որոշում են Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների կարիքները հոգալու համար հատկացնել 2.030.000 ռուբլի, ինչպես նաև ընդունում են որոշում՝ ներգաղթի կազմակերպման վերաբերյալ նյութերը հավաքելու, ուսումնասիրելու և հրատարակելու մասին<sup>4</sup>: Այս որոշումը հիմնված էր ՀՀ կառավարության մեկ այլ որոշման վրա, որտեղ ասված էր. «բանալ Ներքին գործերի մինիստրության ներգաղթի և վերաշինության բաժնին առայժմ 30.000 ռ. վարկ՝ Հյուսիսային Կովկասի գաղթականների դրության հետ ծանոթանալու նպատակով ներկայացուցիչ ուղարկելու համար: բ) Համաձայն 1919 թ. հունիսի 5-ի օրենքի, թույլատրել Ներքին գործերի մինիստրության Ներգաղթի և Վերաշինության բաժնին ծախսել այդ նպատակի համար իր տրամադրության տակ եղած գումարներից»<sup>5</sup>:

Հայ գաղթականների հարցի լուծման ուղղությամբ մեծ պատասխանատվություն էր դրված նաև ՀՀ Խնամատարության, Պարենավորման և Արդարադատության նախարարությունների վրա: Ինչպես նշում է Ալ. Խատիսյանը, 1919 թ. վերջերից ՀՀ Խնամատարության նախարարության գործունեությունը բարեգործականից, նպաստավորումից անցում կատարեց աշխատավորությանը օգնություն կազմակերպելու սկզբունքին:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 228-229:

<sup>2</sup> Տե՛ս Ալ. Խատիսյան, նշվ աշխ, էջ 120:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 546:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 265:

<sup>5</sup> Նույն տեղում:

Նախ, ստեղծվում են աշխատավորական և վերաշինության բաժիններ, որոնց միջոցով նախարարությունը զբաղվում էր ոչ միայն ՀՀ վերադարձած գաղթականության տեղավորման, առողջապահության խնդիրների լուծման հարցերով, այլ նաև իր խնամատարության տակ երկրից դուրս գտնվող գաղթականներով<sup>1</sup>: Օրինակ, ՀՀ կառավարության 1919 թ. մարտի 26-ի նիստում լսում են արդարադատության և խնամատարության նախարարների զեկուցումը՝ Վրաստանի որբերի և գաղթականների խնամատարության համար վիրահայրոց ազգային խորհրդին վարկ բանալու մասին<sup>2</sup>, կամ ՀՀ կառավարության 1919թ. մայիսի 10-ի նիստում խնամատարության նախարարը զեկուցում է Թիֆլիսի խորհրդակցության որոշման մասին, որով առաջարկվում էր Ախալքալաքի գավառի ազգաբնակչությանը հատկացնել 10 միլիոն ռուբլի՝ սերմացու ձեռք բերելու համար<sup>3</sup>: Փաստորեն ՀՀ խնամատարության մինիստրությունը ուսումնասիրում էր գաղթականության խնդիրները, նախահաշիվ կազմում դրանց լուծման համար և կառավարությանը տեղյակ պահում առկա խնդիրների մասին:

Տարբեր երկրներում հաստատված հայ գաղթականության աջակցության գործի կազմակերպումը մինչև 1918 թ. նոյեմբերը իրականացնում էր ՀՀ Ներքին գործերի նախարարությունը, իսկ 1918 թ. նոյեմբերի սկզբից ստեղծվում է խնամատարության նախարարությունը, որին վերապահվում է փախստականների խնամատարության, լքված հողերի վրա տեղավորելու գործը<sup>4</sup>:

Ինչ վերաբերում է ՀՀ Պարենավորման նախարարությանը, այն զբաղվում էր թե՛ արտաքին, և թե՛ ներքին պարենային հարցերի կարգավորմամբ: ՀՀ-ում և նրա սահմաններից դուրս գտնվող հայությանը մատակարարում էր այլուր, հացահատիկ, սերմացու և այլն<sup>5</sup>: Այսինքն, Պարենավորման նախարարությունն իր հերթին ուսումնասիրում էր գաղութ-օջախներում առկա խնդիրները և ներկայացնում կառավարությանը:

Այսպիսով, Հայաստանի առաջին Հանրապետության կապերը գաղութների ու գաղթականության հետ, չնայած առկա մեծ դժվարություններին, զգալիորեն խորացան: Գաղութների ու գաղթականության հետ հարաբերվելու նշված կառուցակարգերի առկայությունը խոսում է այն մասին, որ երկրի իշխանությունները եղած հնարավորության պայմաններում ամեն ինչ արել են գաղթօջախներում առկա խնդիրներին ծանոթանալու, փոխադարձ օգնության կազմակերպման, հարաբերությունների խորացման առումով: Սա էին փաստում բազմաթիվ այն

<sup>1</sup> Տե՛ս Ալ. Խատիսեան, նշվ աշխ, էջ 121-123:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 142:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 184:

<sup>4</sup> Տե՛ս Կ. Հակոբյան, Գաղթականության խնդիրը ՀՀ-ում 1918-1920 թթ., (պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն), Ե., 2006, էջ 79:

<sup>5</sup> Տե՛ս Ալ. Խատիսեան, նշվ աշխ, էջ 115-116:

զեկուցումները, որ ներկայացնում էին սպասարկու կառույցները կառավարության նիստերում՝ կատարելով համապատասխան ուսումնասիրություններ տիրող իրավիճակը ներկայացնելու համար, որպեսզի կառավարությունն էլ, իր հերթին, միջոցներ ձեռնարկեր և կայացներ համապատասխան որոշումներ:

2. ՀՀ քաղաքականության սկզբունքները գաղութների ու գաղթականության հարցում: ՀՀ կառավարությունը ջանք չէր խնայում դրսում գտնվող հայրենակիցներին օգնելու համար՝ դա համարելով իր պարտականությունը և հոգսը: Նույնիսկ երբ Հայաստանի խորհրդի (պառլամենտի) նիստերից մեկում հարց է բարձրանում՝ արդյո՞ք ՀՀ կառավարությունը պետք է զբաղվի ամբողջ հայ գաղթականության, թե՞ միայն Հայաստանի սահմաններում գտնված գաղթականների գործով, Ռ. Տեր-Մինասյանն իր խոսքում ամբողջացնում է պատգամավորների տեսակետները. «Պետական բյուջեն և առանց այն էլ քայքայված տնտեսությունը թույլ չեն տալիս այդքան մեծ հիմունքների վրա դնել նպաստի գործը: Մյուս կարծիքն այն է, որ ինչ էլ որ լինի, միջոցների պետք է դիմել՝ ամբողջ գաղթականությանը շուտափույթ օգնություն հասցնելու համար»<sup>1</sup>: Ստացվում է, որ այս հարցում կարծիքները չէին համընկնում, չնայած, ի վերջո, հաղթեց երկրորդը:

Առաջին և կարևոր սկզբունքը գաղթականության խնդիրներին խորությամբ ծանոթանալն էր: Դրա համար մարդիկ էին ուղարկում գաղթօջախներ, որպեսզի հավաստի տեղեկություններ հավաքեն, նախահաշիվ կազմեն և դրանց լուծման արդյունավետ ծրագրեր մշակեն: Օրինակ, ՀՀ Արտաքին գործերի նախարարությանը ՀՀ կառավարության 1918 թ. նոյեմբերի 29-ի նիստում հանձնարարվել էր կազմել քննիչ մարմին՝ Անդրկովկասում հայ ազգի կրած զոհերի և վնասների մասին փաստեր հավաքելու: Այդ նպատակով կառավարությունը 20.000 ռուբլի է հատկացրել Թիֆլիսում գործող հայրենակցական միությունների խորհրդին՝ հիշյալ նյութերը ձեռք բերելու համար<sup>2</sup>:

Երկրորդ կարևոր սկզբունքը գաղթականությանը նպաստներ տրամադրելն ու պարենով ապահովելն էր: ՀՀ կառավարության կազմած միջոցներից գաղթականությանը օգնելու համար տրամադրվող նպաստները և պարենը միտված էր առաջին հերթին թեթևացնելու գաղթականության հոգսը: Դրա մասին վկայող օրինակները ՀՀ կառավարության և պառլամենտի որոշումներում բազմաթիվ են: Օրինակ, պառլամենտի 1918թ. հոկտեմբերի 23-ի նիստում ընդունվում է Վիրահայ ազգային խորհրդին 5 միլիոն նպաստ տալու օրինագիծ՝ գաղթականներին օգնության համար<sup>3</sup>: Ինչպես նշեցինք, կառավարությանը մտահոգում էր նաև գաղթականության

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 32:

<sup>2</sup> Նույնը, էջ 59:

<sup>3</sup> Նույնը, էջ 68:

պարենային հարցի կարգավորումը, որ արտահայտվում է այլուր տրամադրելով նրան: Այդ խնդրի լուծման մասին ՀՀ կառավարության 1919 թ. հունիսի 20-ին նիստում գեկուցեց ՀՀ պարենավորման նախարարը<sup>1</sup>:

Մյուս կարևոր սկզբունքը հնարավորության դեպքում գաղթականությանը ՀՀ տեղափոխելն էր: Այդ նպատակով իշխանությունները կոչ են հղում աշխարհասփյուռ հայությանը վերադառնալու հայրենիք, որովհետև «Հայաստանը ողջ հայության հայրենիքն է»<sup>2</sup>:

Հայաստանի կառավարությունը ներգաղթը կազմակերպելու որոշումը կայացրել է 1919 թ. հունիսի 10-ին<sup>3</sup>:

Կառավարության ուշադրության կենտրոնում էր նաև երկրից դուրս գտնվող որբերի խնդիրը, որով զբաղվում էր Խնամատարության նախարարությունը: Այդպես, ՀՀ կառավարության 1919 թ. մարտի 10-ի նիստում որոշում են, որ Վրաստանում և Ադրբեջանում գտնվող հայ որբերի խնամատարությամբ, որոնք այդ պետությունների հպատակ չեն, պիտի հոգա ՀՀ կառավարությունը՝ հանձինս ՀՀ Խնամատարության նախարարության<sup>4</sup>: Որոշում են խնամատարության համար վարկ բանալ<sup>5</sup>:

ՀՀ կառավարությունը փորձում էր խնդրո առարկա հարցերով իր առջև ծառայած խնդիրները հաճախ լուծել դաշնակիցների աջակցությամբ, մասնավորապես գաղթականությանը հացահատիկ ու այլուր տրամադրելու հարցում<sup>6</sup>:

Հայաստանի կառավարությունը, գիտակցելով, որ հայեցի դաստիարակությունը հայապահպանման հզոր կռվան է, զարկ տվեց նաև արտերկրի հայկական կրթական հաստատություններին աջակցելու գործընթացին: 1919 թ. ապրիլի 25-ի նիստում կառավարությունը որոշում է 15000 ռուբլի նպաստ տրամադրել Թիֆլիսում գտնվող Ալեքսանդրապոլի գիմնազիային և 3000 ռուբլի՝ նույն քաղաքում գտնվող Կարսի իգական գիմնազիային<sup>7</sup>: Իսկ դեկտեմբերի 19-ի նիստում կառավարությունը քննարկում է և հաստատում Բաքվի և Նուխու հայկական դպրոցներին 400.000 ռուբլու դրամական աջակցություն ցույց տալու մասին<sup>8</sup>: Որոշում են նաև Հայաստանից դուրս գտնվող հայկական կրթական հաստատություններին 1.500.000 ռուբլու վարկ բաց թողնել<sup>9</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 225:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Ստեփանյան, 20-րդ դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Ե., 2010, էջ 31:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 199, ցուցակ 1, գործ 32, թուղթ 349:

<sup>4</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 127:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 139:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 414:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 163-164:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 361:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 363:

**Манэ Ананян, Политика Первой Республики Армения в вопросах эмиграции и эмигрантов-** Исследуя структуру и принципы политики в отношении колоний и эмигрантов в Первой Республике Армения, приходим к выводу, что власти Первой Республики нашли необходимый потенциал, при тяжелых политических и экономических условиях, чтобы вести работы с армянской колонией, оказать поддержку эмигрантам и заниматься сохранением армянства.

**Mane Ananyan, The emigration policy of the first Republic of Armenia** - Studying the political structure and principles towards the colonies and emigrants in the First Republic of Armenia, we come to the conclusion that in the tough political and economic situation the authorities of the First Republic of Armenia had enough potential to develop contacts with the colonies, assist the emigrants, and address the issue of preserving the Armenian identity.

**Մանե Անանյան - ԵՊՀ պատմության ֆակուլտետի սիյուռքագիտության ամբիոնի հայցորդ:**